



Մ Ա Հ ՄԻՔԱՅԵԼ Դ. ՄԱԶՄԱՆՅԱՆԻ



Երկարատև ու ծանր հիվանդությունից հետո, հոկտեմբերի 29-ին, ուրբաթ օրը, կյանքից հեռացավ Գերագույն հոգևոր խորհրդի անդամ, Մայր Աթոռին առընթեր ճար-

տարապետական հանձնաժողովի նախագահ, վաստակավոր ճարտարապետ Միքայել Դավթի Մազմանյանը:

Հանգուցյալը ծնվել է 1899 թվականին Թբիլիսի քաղաքում: Սկզբնական կրթությունը ստացել է տեղի Ներսիսյան դպրոցում: Դեռևս աշակերտական նստարանից նա մասնավոր սեր է ցուցաբերել պատմության, գրականության և արվեստի ասպարեզներում:

Ներսիսյան դպրոցն ավարտելուց հետո նա մեկնում է Մոսկվա, ընդունվում գեղարվեստա-տեխնիկական ինստիտուտի ճարտարապետական ֆակուլտետը, որն ավարտում է 1929 թվականին և վերադառնում Երևան՝ իր կյանքն ու ողջ գիտելիքները ի սպաս դնելու հարազատ ժողովրդի մշակութային զարգացման գործին:

Մ. Մազմանյանը մեր արդի հայրենական ճարտարապետության հիմնադիրներից մեկն է և մնայուն ներդրումներ ունի այդ ասպարեզում:

Երևանի, մեր հանրապետության, ինչպես նաև Միության մի շարք քաղաքների հուշակապ շենքեր կառուցվել են Մ. Մազմանյանի նախագծումներով:

Հանգուցյալը ունեցել է նաև մանկավարժական բեղուն գործունեություն: Նա եղել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի հիմնադիրներից մեկը և նրա առաջին տնօրենը:

1955 թվականից ճարտարապետ Միքայել Մազմանյանը գլխավորում է «Երևաննախագիծ» ինստիտուտի հատակագծման արվեստանոցը, որտեղ մշակվում են Երևանի բնակելի նոր շրջանների, ինչպես նաև մայրաքաղաքի կենտրոնական մասի վերակառուցման բազմաթիվ հատակագծեր:

Մ. Մազմանյանի քաղաքաշինական գործունեության պակշը հանդիսացավ Երևան քաղաքի գլխավոր հատակագիծը՝ կազմված մինչև 2000 թվականի հեռանկարային զարգացման համար, որն ընդունվեց և հաստատվեց կառավարության կողմից:

1957 թվականից սկսած, Վեհափառ Հայրապետի նախաձեռնությամբ Մայր Աթոռին առընթեր կազմված ճարտարապետական հանձնաժողովի նախագահն էր Մ. Մազմանյանը, որն իր մյուս անվանի ճարտարապետ ընկերների հետ միասին ինքնաբերաբար ակիրաբար ու մեծ սիրով իր վրա էր վերցրել Մայր Աթոռի, վանքերի, եկեղեցիների վերանորոգչական և ընդհանրապես շինարարական մեծ աշխատանքների ընդհանուր ղեկավարությունը՝ մարմին տալու շինարար Հայոց Հայրապետի ծրագրերին:

1962 թվականի հոկտեմբերին Մայր Աթոռում գումարված ազգային-եկեղեցական ժողովում Մ. Մազմանյանն ընտրվում է Գերագույն հոգևոր խորհրդի անդամ և այդ պարտականությունը նա կատարում է սրտեռանդուն ու հայրենասիրական ջերմությամբ մինչև իր մահը:

Հանգուցյալի աճյունը նոյեմբերի 1-ին ամփոփվում է Երևանի քաղաքային պանթեոնում:

Նոյեմբերի 14-ին, կիրակի օրը, ս. պատարագից հետո, Մայր տաճարում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, կատարվում է հոգեհանգստյան մասնավոր արարողություն, որին ներկա են լինում հանգուցյալի հարազատները, բարեկամները, աշխատանքային ընկերները:

Վեհափառ Հայրապետը «Ամենայն մարմին իբրև զխոտ է և ամենայն փառք մարդոց իբրև զճաղիկ խոտոյ» (Ա Պետր. Ա 24) բնաբանով Իր դամբանականի մեջ խոսում է ճարտարապետ Միքայել Մազմանյանի կյանքի և գործունեության մասին՝ վեր հանելով նրա մատուցած ծառայությունները որպես հայրենի ճարտարապետության վաստակավորի, Գերագույն հոգևոր խորհրդի անդամի և Մայր Աթոռին առընթեր ճարտարապետական հանձնաժողովի նախագահի:

Հոգեհանգստյան արարողությունից հետո Վեհափառ Հայրապետը ընդունում է Վեհաբանում հանգուցյալի հարազատներին, բարեկամներին և ընկերներին ու մխիթարության հայրական խոսքով սփոփում նրանց վիշտն ու տրտմությունը:

Ճարտարապետ Միքայել Մազմանյանի հիշատակը ոգեկոչելով, մխիթարության խոսքեր են ասում Վեհափառ Հայրապետը, տ. Հայկազուն, տ. Սեբոստիան, տ. Տաճատ արքեպիսկոպոսները, Մայր Աթոռին առընթեր ճարտարապետական հանձնաժողովի անդամներ Վ. Հարությունյանը, Կ. Ղաֆադարյանը, նկարիչ Գր. Խանջյանը և «Էջմիածին» ամսագրի խմբագիր Ա. Հատիտյանը:

Հանգիստ ճարտարապետ Միքայել Մազմանյանի ոսկորներին:

